Մրցույթ՝ «Երևանի Սիամանթոյի անվան թիվ 162 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (18 դասաժամ), մաթեմատիկայի (20 դասաժամ), ինֆորմատիկայի (5 դասաժամ), շախմատի (5 դասաժամ), դասվարի (16 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլը անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
_դիմում (ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի
_ բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
_ անձը հաստատող փաստաթուղթ
_ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում)
_ինքնակենսագրություն (ձև 5)
_այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
_ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
_հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
_որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 29-օգոստոսի 2022 թ. մինչև 9-ը սեպտեմբերի 2022թ. ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. սեպտեմբերի 16-ին՝ ժամը 14:00-ին**, Երևանի Սիամանթոյի անվան թիվ 162 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Անդրանիկի 4:
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 72-82-10 հեռախոսահամարով: